

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Բաղդասարյան Վ. Մ.**

Հայաստանի Հանրապետությունում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը (ամրագրված է ՀՀ Սահմանադրության մեջ) հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանություն իրականացնող մարմինների անօրինական գործողություններից պաշտպանությունը անձի համար պետք է հանդիսանա կարևորագույն երաշխիքներից մեկը: Չափազանց կարևորվում է հանրային իշխանություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման օրենսդրական մեխանիզմների կիրառումը:

Բանալի բառեր. վարչարարությամբ պատճառված վնաս, հանրային իշխանություն իրականացնող մարմին, վարչական վարույթ, իրավաբանական պատասխանատվություն, վարչարարության իրավաչափություն:

Յուրաքանչյուր իրավական պետությունում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ հանրային իշխանություն իրականացնող մարմինների անօրինական գործողություններից, պետք է հանդիսանա իրավական պետության կարևորագույն երաշխիքներից մեկը: Այս առումով չափազանց կարևոր է վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմանն առնչվող հարցերի իրավական պատշաճ կարգավորումը:

Այդպիսի երաշխիք են հանդիսանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 18.02.2004թ., ուժի մեջ է մտել 31.12.2004թ.) և Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.): Մասնավորապես՝ հանրային իշխանություն իրականացնող մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցմանն են վերաբերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 18-րդ, 1063-րդ և 1064-րդ հոդվածները, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի [1] /այսուհետ՝ Օրենք/ ամբողջ 7-րդ բաժինը ամբողջությամբ կարգավորում է նշված հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով առաջին անգամ սահմանադրաիրավական հարթությունում ուղղակի կերպով սահմանվեցին պատշաճ վարչարարության և վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքները: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Իսկ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրության հիշյալ նորմերի բովանդակությունից ակնհայտ է, որ վարչական մարմինները հստակ գիտեն՝ ինչ կարող են անել, և ինչն է արգելված անել: Հետևաբար, իշխանական լիազորություններով օժտված պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք պետք է դրսևորեն պատշաճ վարքագիծ՝ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով վարչարարություն իրականացնելիս:

Պետք է նշել, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման կապակցությամբ ծագող իրավահարաբերությունների հանրային իրավական բնույթը հաստատվում է նրանով, որ այդ հարաբերությունները օժտված են միայն հանրային իրավահարաբերություններին բնորոշ առանձնահատկություններով:

Ոչ պատշաճ վարչարարության, իսկ Օրենքի 7-րդ բաժնով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը, եթե վնասը

պատճառվել է գործադիր իշխանության համապատասխան մարմինների կամ տարածքային կառավարման մարմինների կողմից, կամ համապատասխան համայնքը՝ տեղական ինքնակառավարման մարմինների պատճառած վնասի դեպքում (Օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մաս): Պետք է նշել, որ Օրենքում հստակ նշված է, որ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ այն դեպքերի, երբ վնաս է պատճառվել իրավաչափ վարչարարությամբ:

Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման խնդիրներին իր որոշումներում անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը մի շարք գործերով այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու և դրանով պատճառված վնասի հատուցման իրավունք ձեռք բերելու համար նախապես անհրաժեշտ է ոչ իրավաչափ ճանաչել իրականացրած վարչարարությունը: Այսպես, ՎԴ/1761/05/14 վարչական գործով 2016 թվականի դեկտեմբերի 26-ին կայացված որոշմամբ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է հետևյալը. «Վարչական մարմինների վարչարարության արդյունքում պետության պատասխանատվությունը ծագում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝ – իրականացվել է ոչ իրավաչափ (իսկ նույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ) վարչարարություն, – պատճառվել է վնաս, իրականացված վարչարարության և պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ: (...)Այսպիսով, ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով» [2]:

Մեկ այլ՝ ՎԴ/0277/05/09 վարչական գործով 2010 թվականի դեկտեմբերի 3-ին կայացված որոշմամբ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը նշել է, որ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որ առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որից հետո միայն անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը,

գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադասության կամ դատական կարգով [3]:

Օրենքի 100-րդ հոդվածի համաձայն՝

1. Վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա:
2. Վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

Այս կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը ՎԴ/3280/05/09 վարչական գործով 2010 թվականի դեկտեմբերի 3-ին կայացված որոշմամբ արձանագրել է, որ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որ առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որից հետո միայն անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադասության կամ դատական կարգով [4]:

Սսվածից հետևում է, որ ՀՀ դատական պրակտիկայում այս ուղղությամբ արտահայտած դիրքորոշմամբ վարչարարությամբ պատճառված վնասը, եթե ճանաչվել է ոչ իրավաչափ, ապա դրա հատուցման պարտականությունը պետք է կրի պետությունը, քանի որ այդ պարտականության կրող հատուկ սուբյեկտը պետությունն է հանդիսանում: ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0441/02/16 վարչական գործով կայացված որոշմամբ նշել է հետևյալը. «Վարչական մարմնի կողմից պատճառված վնասի հատուցման պարտականությունը ծագում է պատշաճ վարչարարության ապահովման միջոցով մարդու հիմնարար իրավունքների երաշխավորված իրականացմանն ուղղված հանրային շահի կենսագործման կապակցությամբ» [5]:

Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմամբ պայմանավորված իրավահարաբերությունների բնույթը պարզելու համար անհրաժեշտ է բացահայտել հանրային և մասնավոր իրավահարաբերությունները միմյանցից առանձնացնելու չափանիշները: Հանրային իրավահարաբերությունների հասցեատերը միշտ հասարակությունն է. հենց այդ պատճառով էլ որոշակի առանձին անձը միջոցներ չի ձեռնարկում այն փաստացի իրականացնելու համար:

Այնուամենայնիվ, պատճառոված վնասի փաստացի իրականացումը ապահովելու խնդիրը դրված է անհատի վրա՝ անկախ նրանից, թե ովքեր կարող են նախաձեռնել հանրային իշխանական ակտերը ոչ իրավաչափ ճանաչելը: Վերլուծության ենթարկելով Օրենքի 100-րդ, 102-րդ հոդվածների նորմերը՝ պարզ է դառնում, որ օրենսդիրը վնասի հատուցման տրամադրելու ծանրությունը վերապահում է տուժողին, ով էլ պետք է հիմնավորի վնասի և ոչ իրավաչափ վարչարարության հետ դրա պատճառահետևանքային կապը: Անհատը ինքը պետք է ներկայացնի նման դիմում, քանի որ վարչական մարմինը դիմումի բացակայության դեպքում նման նախաձեռնություն չի դրսևորի: Իսկ օրենքի 101-րդ հոդվածը սահմանում է, որ վնասի հատուցման պահանջը կարող է ներկայացվել այն պահից հետո՝ 3 տարվա ընթացքում, երբ անձն իմացել է կամ պարտավոր էր իմանալ իրեն պատճառոված վնասի մասին, բայց ոչ ուշ, քան այն գործողության կատարման կամ անգործություն թույլ տալու կամ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից 10 տարին լրանալը, որով նրան վնաս է պատճառվել: Այս կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը հայտնել է իրավական դիրքորոշում հետևյալի մասին. «Վարչարարությամբ պատճառոված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը՝ ուղղված իրավասու վարչական մարմնին (...), սահմանված ընդհանուր կարգով վարչական վարույթ հարուցելու հիմք է: Ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառոված վնասի հատուցման պահանջով դիմելով համապատասխան վարչական մարմնին՝ շահագրգիռ անձը հայցում է իր պահանջի բավարարման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտի ընդունում» [6]:

Այսպիսով՝ նշված նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ վարչարարությամբ պատճառոված վնասի հատուցման վերաբերյալ ներկայացված պահանջի կապակցությամբ վարչական մարմինը պետք է ընդունի այն բավարարելու կամ մերժելու մասին վարչական ակտ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թ. դեկտեմբերի 15-ին ընդունված թիվ R(2004)20 հանձնարարականի համաձայն՝ «Վարչական ակտ» են համարվում՝ ա) իրավական ակտերը՝ անհատական և նորմատիվ (ընդգծումը մերն է), ինչպես նաև վարչակազմի ֆիզիկական գործողությունները, որոնք արվել են վարչական իշխանությամբ իրենց վերապահված գործառույթներն իրականացնելիս, և որոնք կարող են ազդել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների վրա, բ) որոշակի

գործողություն կատարելուց հրաժարվելու կամ անգործության իրավիճակներ, երբ վարչական մարմինը պարտավոր է կիրառել ընթացակարգ համապատասխան պահանջի առկայության դեպքում [7]:

«Վարչական ակտ» հասկացության բնորոշումը հստակ սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Հարկ է առանձնացնել նույն Օրենքում վարչական ակտին տրված բնորոշումներին, մասնավորապես. վարչական ակտը ընդունվում է վարչական մարմնի կողմից, վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, վարչական ակտն ունի ակտիվ ներգործություն, վարչական ակտն ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ վնասների հատուցումը հանդիսանում է քաղաքացիաիրավական իրավունքների պաշտպանական միջոց, որը գործում է մասնավոր՝ իրավահավասար սուբյեկտների միջև ծագած հարաբերություններում: Իսկ մասնավոր անձանց միջև իրավական հարաբերությունները համարվում են մասնավոր, պայմանագրային, ուստի այդ հարաբերություններից բխող վեճերը ՀՀ-ում պետք է քննվեն քաղաքացիական արդարադատություն իրականացնող դատարանների կողմից՝ ելնելով մասնավոր իրավունքի սկզբունքից [8]:

Համեմատության համար նշենք հետևյալը. հատկանշական է, որ Բելառուսի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի և նրանց պաշտոնատար անձանց կողմից քաղաքացուն, իրավաբանական անձին պատճառված վնասի դեպքում փոխհատուցման իրավունք, սակայն այն չի մատնանշում, թե որ սուբյեկտի կողմից այն պետք է փոխհատուցվի:

Մասնավորապես՝ Բելառուսի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 938-րդ հոդվածի համաձայն. «Վնասը, որը պատճառվել է

քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց գործողության կամ անգործության հետևանքով, այդ թվում նրանց՝ օրենքին հակասող ակտի արդյունքում, ենթակա է փոխհատուցման»:

Վերոգրյալը թույլ է տալիս նշելու, որ վարչարարությամբ պատճառված վնասի հետ կապված հարաբերությունների կարգավորումը դուրս են քաղաքացիաիրավական կարգավորման առարկայի շրջանակներից և քաղաքացիական օրենսգրքի վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների վերաբերյալ իրավական դրույթները կիրառվում են այն ծավալով, որքանով չեն հակասում Օրենքի 95-111-րդ հոդվածներին, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժինի 15 և 16-րդ գլուխները վերաբերում են բացառապես հանրային իրավահարաբերություններին, ինչի մասին է վկայում նաև Վճռաբեկ դատարանի՝ որպես օրենքի միատեսակ կիրառումն ապահովող մարմնի, իրավական դիրքորոշումը [9]:

Դրամական միջոցներով վնասի հատուցումը նախատեսված է Օրենքի 99-րդ հոդվածով: Նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ եթե վարչարարությամբ վնաս պատճառողի կողմից հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասն է, ապա վնասը հատուցվում է դրամական միջոցներով: Պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ ամբողջապես սահմանված չէ, թե ինչպես է որոշվում վնասի չափը:

Այսպիսով, վնասի հատուցման եղանակներից օրենսդիրը առաջնայնությունը վերապահում է վարչարարությամբ առաջացած հետևանքների վերացմանը, և միայն դրա անհնարինության կամ ոչ բավարար լինելու, ինչպես նաև հետևանքների վերացման համար պատճառված գույքային վնասի չափը գերազանցող ծախսերի անհրաժեշտության դեպքում է, որ օրենսդիրը սահմանում է դրամական միջոցներով վնասի հատուցման եղանակին անցնելու հնարավորություն: Եղանակների նկատմամբ այսպիսի ընտրանքային մոտեցումը, կարծում ենք, միանգամայն հիմնավորված է, քանի որ այն նպաստում է կամայականությունների նվազմանը, վարչարարության որակի բարելավմանը և կոռուպցիոն ռիսկերի բացառմանը: Տվյալ դեպքում ելակետ է ընդունվել այն, որ վարչական մարմինը պետք է

գրկված լինի սուկ դրամական միջոցներով վնասի հատուցման միջոցով կամայական վարչարարությունը շարունակելու հնարավորությունից [10]:

Ամփոփելով վերը ասվածը՝ պետք է նշել, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի շարունակական կատարելագործումը անշուշտ ողջունելի է, սակայն իրականացվող օրենսդրական փոփոխությունները հաճախ իրավական անորոշություն են առաջացնում իրավակիրառ պրակտիկայում ինչպես ֆիզիկական և իրավաբանական անձանց, այնպես էլ վարչական մարմինների համար:

Չնայած այս հանգամանքին՝ գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում գործող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» օրենքը իսկապես հանդիսանում է վարչարարություն իրականացնող մարմինների լիազորությունները օրինականորեն ու արդյունավետ իրականացնելու կարևորագույն երաշխիքներից մեկը:

УЩЕРБ, ПРИЧИНЕННЫЙ АДМИНИСТРАЦИЕЙ. НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Багдасарян В. М.

Уважение и защита основных прав и свобод человека и гражданина в Республике Армения является обязанностью государственной власти, что закреплено в Конституции Республики Армения. Защита от противоправных действий со стороны государственных органов должна быть одной из важнейших гарантий личности. Использование законодательных механизмов для возмещения ущерба, причиненного незаконными действиями государственных служащих, имеет большое значение.

Ключевые слова: административный ущерб, государственная власть, административное производство, юридическая ответственность, верховенство закона.

THE PECULIARITIES FOR DAMAGE COMPENSATION CAUSED BY THE ADMINISTRATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Baghdasaryan V. M.

The protection and the respect for the fundamental rights and freedoms of the human being and the citizen in the Republic of Armenia shall be the duty of the public power and it is fixed in the Constitution of the Republic of Armenia. One of the most important guarantee of the public power should be

the protection of the person from nonlegitimate action. It is extremely important the application of legislative mechanisms for the compensation of damages caused by nonlegitimate actions of officials.

Keywords: damage caused by administrative action, the public power, administrative proceedings, legal responsibility, administrative jurisdiction.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված «18.02.2004-ին»:
2. Թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի «26 դեկտեմբերի 2016-ին» կայացված որոշում:
3. Թիվ ՎԴ/0277/05/09 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի «03 դեկտեմբերի 2010-ին» կայացված որոշում:
4. Թիվ ՎԴ/3280/05/09 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի «03 դեկտեմբերի 2010-ին» կայացված որոշում:
5. Թիվ ԵԿԴ/0441/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից «7 ապրիլի 2018 թվականին» կայացված որոշում:
6. Թիվ ՎԴ/0832/05/16 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի «30.11.2018 թվականի» որոշում:
7. https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805db3f4 (25.09.2021):
8. Զեկույց ՀՀ վարչական արդարադատության որոշ հիմնահարցերի վերաբերյալ (Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներ) Երևան: 2011: էջ 15:
9. ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի վարչական գործ թիվ ԵԲԴ/0736/02/08 որոշումը:
10. Դանիելյան Գ. Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ: Երևան: «Տիգրան Մեծ»: 2011: 380 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Բաղդասարյան Վ. Մ. – դասախոս, Շիրակի պետական համալսարան

Հայցորդ, ՀՀ Պետական կառավարման ակադեմիա

Էլ. փոստ՝ vahe.bagdasaryan.92@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 04.10.2021

Գրախոսվել է՝ 21.02.2022